# ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

## «Արարատ» ամսագրի յարգելի խմբագրութեան

*Արմաւիրցի մեծարգոյ պ. պ. Աղէքսանդր, Գաբրիէլ և Միքայէլ Թարոսեան եղբայրները նուիրաբերել են Մայր Տաճարին ժամաշապկացու սպիտակ քաթան 560 արշին, կանաչ քօղայացու կտորով, որոնցից պատրաստուեցին 77 ժամաշապիկներ։*

*Թարոսեան եղբայրների այդ նուէրի մասին զեկուցանելով Վեհափառ Հայրապետին. Նորին Սրբութիւնը բարեհաճեց օրհնել յարգելի նուիրատուներին։*

*Այս մասին խնդրում եմ հրատարակել «Արարատի» մերձակայ համարում։*

Մայր Տաճարի Լուսարարապետ՝ Ղեւոնդ եպիսկոպոս

## Ս. Էջմիածնի Գ. Հոգեւոր Ճեմարանի տեսչի օգնական

### Պ. ՄԵՆՏՈՐ ՌՈՍՏՈՄԵԱՆԻՆ

Երկրորդ պատասխան.

*Արարատի յունիսի և (յուլիսի) համարը միայն երեք օր առաջ ձեռքս հասաւ։ Ռոստոմեանը կրկին հանդէս է եկել. և չհերքելով իմ ա. պատասխանում բերած փաստերը, իր յիշողութեանն ապաւինելով՝ յայտնում է, որ ես Նորան Ճեմարանի տարեգրքից՝ սեպտեմբերի 27-ից յետոյ միայն կարող եմ խնդրած լինել մատենադարանի գրքերն ստուգել։*

*Բայց չէ՞ որ, ինչպէս ա. պատասխանումս ասել եմ, ես դեռ երեք տարի առաջ մատենադարանապետութիւնն ստանձնելով՝ ձեր նախորդից եմ խնդրել միևնոյն բանը, ի՞նչ ունէի ձեզանից ծածկելու մինչև սեպտեմբեր։ Սակայն այստեղ էականը այս չէ, այլ այն, որ ես և ձեր ժամանակ մատենադարանն ստացել եմ առանց հաշուի և ստուգութեան։ Ձեր այս բ. նամակով «11*

յունիսի 1910» հաստատում էք նոյնը, քանի որ պ. Խոստիկեանի և Սօյանեանի ստուգումը «լրիւ չէ»։ Եւ դուք չէք էլ տուել մատենադարանապետից՝ ստուգութեան արդիւնքը, ոչ վերջինը և ոչ էլ յունուարի 15-ի արձանագրութիւնը։ Ի զուր չէ, որ ես իմ ա. նամակում յայտնել եմ, որ ես մատենադարանապետ՝ «կոչւում եմ» միայն, այլապէս ինչպէս էք առանց ինձ մատենադարանի արձանագրութիւն կազմել և չէք թողել գոնեա մի պատճէն։

Ենթադրենք անգամ, որ դուք յունուարի 15-ին էք կազմել թէ արձանագրութիւնը և թէ մինչև իսկ ստուգումը և զեկուցել էք Վեհափառ Հայրապետին, բայց որ ինձ արձանագրութիւնը չէք յանձնել, ի՞ր կորուստների մասին էք գրում։

Եւ այժմ դուք ձեզ քաջ յայտնի իրողութիւնները չէք յիշում և յայտնելով ստուգութեան արդիւնքը. «8595 գրքից՝ պարզեցին 459 գրքի կորուստ և 2662 գրքի համարի տակ չլինելը» ընթերցողի մէջ անտարակոյս այն կարծիքն էք առաջ բերում, որ եթէ ոչ բոլորովին, գոնէ մասամբ, ես եմ պատասխանատու։ Մի՞թէ ձեզ յայտնի չէ, որ այդ «ոչ լրիւ» ստուգութիւնը եղել է բոլորովին անկանոն ձևով, ոչ ըստ գրացուցակ մատեանների, որտեղ մտնում են հետզհետէ և նոր ստացուած գրքերը, բայց չունին առանձին տոմսակներ։ Ձեզ քաջ յայտնի պիտի լինի, որ մենք ղեկավարւում ենք այդ մատեաններով, իսկ ստուգումը կատարուել է մատենադարանի ներքևը գըտնուած այսպէս կոչուած արխիւից և զանազան անկիւններից հաւաքուած տոմսակներով։ Դուք որ լաւ պիտի իմանաք դեռ որքան գրքեր կան դասագրքերի սենեակում, մատենադարանի արխիւում և ճեմարանի ննջարանի վերևը զանազան ժամանակներից, շատ շատերը հին համարներով, որոնցից դասագրքերի սենեակից հետզհետէ ցարդ հայերէնները մասամբ ջոկուել և բերւում են մատենադարանը, և դեռ մատենադարանը լրիւ չստուգուած և այդ բոլորը չտեսած խօսում էք գրքերի կորուստների և համարի տակ չլինելու մասին։ Այդ բոլորից զատ դուք չէք յիշատակում, որ իմ ժամանակ կազմուած բոլորովին կորած և կորցրած, բայց գրքերի արժէքն ստացուած տետրի հենց ա. երեսում կայ մի քառորդ թերթ հետևեալ գրութեամբ. «Ճեմարանի մատենադարանից պակասում է առ. 28 օգոստ. 1901 թ. 820 կտոր գիրք (սրանց թւում կայ թէ կորսուածները և թէ պարապելու համար վերցրածները»։ Մի թուղթ, որ ես պատահաբար մատենադարանում գտայ և անմիջապէս ձեզ յայտնեցի ձեր այս նամակը Արարատում տպագրելուց շատ առաջ։

Հիմա ի՞նչ կասէք, կորուստներ ինձնից շատ առաջ:

Դո՛ւք մի նորեկ՝ սեպտեմբերին ձեր ընդհանուր հաշուետուութեան մէջ մռայլ գոյներով ներկայացրել էք և մատենադարանը, իսկ ստուգումը և այն էլ «ոչ լրիւ» կատարել էք տարուայ վերջը, որի արդիւնքը ուրեմն տարուայ սկզբին գուշակել էիք. թէ ոչ ի՞նչպէս լուծենք այս հանելուկը:

Եթէ դուք ձեր ձեռքի տակ եղած տեսչական գործերից, մատենադարանի ցուցակներից և վաւերաթղթերից բարեխղճութեամբ օգտուէիք ձեր հաշիւը կազմելիս, կիմանայիք և կը գրէիք ճշմարտութիւնը: Իսկ եթէ դուք կը շարունակէք ձեր յիշողութեան յենուելով՝ և վաւերաթղթերը ծածկելով՝ ընթերցողներին մոլորեցնել, այդ ձեր բանն է: Միայն թէ դուք պէտք է չմոռանաք, թէ ես ինչ պայմաններում և պայմաններով եմ ստացել մատենադարանը, իսկ որ գլխաւորն է, դուք պէտք է լաւ իմանաք, որ ես մի միայն իմ պարտքերի համար եմ պատասխանատու:

Մատենադարանապետ և ուսուցիչ Ս. Է. Գ. Հ. Ճեմարանի

**Ստեփան Կանայեանց.**

5-ն Օգոստոսի 1910.

Վաղարշապատ.

---

Մոսկուայի Լազարեան Ճեմարանի վարչութիւնը տարւոյս յուլիսի 21-ի № 1765 գրութեան հետ ուղարկել է հանգուցեալ Սարգիս Արքեպիսկոպոս Հասան Ջալալեանցի կտակած դրամագլխի հաշիւը հետևեալ կերպով.

## ՀԱՇԻՒ

---

Սարգիս Հասան Ջալալեանցի դրամագլխի 1909 թուի համար

## ՄՈՒՏՔ

| | % Թղթ. ռուբ. կոպ. | կանխ. դրամ ռուբ. կոպ. |
|---|---|---|
| Մնացել էր առ 1-ն յունուարի 1909 թ. . . . | 111,246-99 | 3,243-92 |
| 1909 թուի ընթացքում | | |